ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 439 -Ա

«25» 12 2023թ. ք. Երևան

«ՍԻԳՄԱ ԷԼԵԿՏՐՈՆԻՔՍ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի մարտի 10-ի N 16-Լ հրամանով հաստատված Ջրային կոմիտեի կանոնադրության 22-րդ կետի 10-րդ ենթակետով և ստորև ներկայացված հիմքերով.

ՀԻՄՔԵՐ

Ջրային կոմիտեի կարիքների համար կազմակերպված վարչական սարքավորումների ձեռքբերման ՋԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/5 ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտ է ներկայացրել «Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊ ընկերությունը, որը էլեկտրոնային աճուրդի արդյունքում առաջին տեղ է զբաղեցրել 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով:

Ներկայացված հայտերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ մասնակից «Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ տեխնիկական բնութագիրը, ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը, որը սահմանվել է ՋԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/5 ծածկագրով ընթացակարգում (4-րդ չափաբաժին):

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ և ՋԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/5 ծածկագրով հրավերի 8.11 կետերի՝ գնահատող հանձնաժողովը 17.11..2023թ. մեկ աշխատանքային օրով կասեցրել է հանձնաժողովի նիստը՝ առաջարկելով «Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ին շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Մասնակից «Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում 20.11.2023թ. ներկայացրել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ փաստաթղթեր, սակայն

Չափաբաժին 4-ի (անձնական համակարգիչներ) համար ներկայացված առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը՝ տեխնիկական բնութագիրը, ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը թերի է, մասնավորապես «Aser» անվանումով ֆիրմային անվանում, ապրանքային նշան, արտադրողի անվանում առկա չէ, «C24»- նշված է ընդհանուր մոդելային շարք, որը չի հստակեցնում կոնկրետ ապրանքի մակնիշը, բացի այդ «i3-120» բնութագրում է ապրանքի պարամետրերը, այլ ոչ թէ մակնիշը: Մասնկիցը չի ներկայացրել նաև հրավերով նախատեսված-առաջարկվող ապրանքի սպասարկման կենտրոնի տվյալները:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 42-րդ կետի և Հրավերի 8.11 կետի (Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:) «Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի հայտը Չափաբաժին 4-ի մասով գնահատվել է անբավարար և մերժվել: Չափաբաժին 4-ը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվել է չկայացած:

Ապրանքների գնման դեպքում՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթերի գնահատման արդյունքում, առաջին տեղ զբաղեցրած մասնակցի («Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի) ներկայացրած փաստաթղթերը չի բավարարում ՋԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/5 ծածկագրով ընթացակարգի պահանջներին, ուստի այդ հանգամանքը դիտարկվում է որպես մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչի արդյունքում դադարեցվել է այդ մասնակցի հետագա մասնակցությունը գնման գործընթացին:

«Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. պարբերության պահանջները, այն է՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Հաշվի առնելով վերոգրյալը ՋԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/5 ծածկագրով ընթացակարգի մասնակից «Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊ (4-րդ չափաբաժնի մասով) ընկերությանը՝ որոշել ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

2. «Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊ ընկերության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով,

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

25.12.2023

X

ԱՐՏԱԿ ՂԱՋԱՐՅԱՆ

Signed by: GHAZARYAN ARTAK 1403750092

Ա.ՂԱՋԱՐՅԱՆ